ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

2004 թ. նոյեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն (1987–2003), Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական նիստը: Այն բացեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը: Այնուհետև Լ. Հախվերդյանի մասին ծավալուն բանախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Ա. Աղասյանը: Ի պատասխան ասված ջերմ խոսքերի, հնչեց Լ. Հախվերդյանի շնորհակալանքի խոսքը՝ ձայնագրված մի հատված իր ծննդյան 75-ամյակին նվիրված նիստում արտասանած ելույթից: Լ. Հախվերդյանի մասին իր հուշերը պատմեց ակադեմիկոս Վ. Հարությունյանը, ապա ընթերցվեց ակադեմիկոս Ս. Կապուտիկյանի ուղերձը: Ակադեմիկոսի գրականագիտական ծանրակշիռ վաստակը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի տնօրեն Ա. Եղիազարյանը:

Լ. Հախվերդյանի բազմաշերտ ստեղծագործական դիմանկարին որոշ նրբագծեր հավելեցին ՀՀ Գրողների միության նախագահ Լ. Անանյանն ու ՀՀ Թատերական գործիչների միության նախագահ Ե. Ղազանչյանը:

Հոբելյանական հանդիսությունների շարքը շարունակեց Լ. Հախվերդյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական եռօրյա (2–4 նոյեմբերի) գիտաժողովը:

Հոբելյանական գիտաժողովն իր աշխատանքը ծավալեց երկու մասնաճյուղերով (ճարտարապետություն և կերպարվեստ, երաժշտություն, թատրոն և կինո):

Ճարտարապետության և կերպարվեստի մասնաճյուղում գումարված 4 նիստում տրվեցին զեկուցումներ՝ նվիրված ճարտարապետության, մնացած 16-ը՝ կերպարվեստի պատմության և տեսության խնդիրներին:

Մասնաճյուղի առաջին նիստը (նախագահ՝ արվեստագիտության դոկտոր Վ. Ղազարյան) բացվեց Մ. Հասրաթյանի՝ հայկական երկխորան եկեղեցիներին նվիրված զեկուցումով, որին հաջորդեցին հայ միջնադարյան ճարտարապետության խնդիրներին վերաբերող ևս երեք զեկուցում (Ա. Թորամանյան, Դ. Քերթմենջյան, Ա. Տեր-Մինասյան): Նույն ժամանակաշրջանի հայկական որմնանկարչության և գրքարվեստի խնդիրներ արծարծվեցին Ն. Քոթանջյանի, Է. Կորխմազյանի և Լ. Զաքարյանի ելույթներում:

Երկրորդ նիստը (նախագահ՝ ճարտարապետության դոկտոր Մ. Հասրաթյան) սկսվեց հնագիտական նյութի հետ գործ ունեցող երկու հաղորդումներով, որոնցից մեկը (Հ. Սիմոնյան) շոշափում էր նախնադարյան արվեստի՝ Շենգավիթում հայտնաբերված մի նոր հուշարձանի, իսկ մյուսը (Ֆ. Տեր-Մարտիրոսով)՝ Էրեբունու որմնապատկերների թվագրման հետ կապված հարցեր: Մատենադարանում պահվող գանձերից մեկի՝ Հեթում Բ արքայի Ճաշոցի մասին ելույթով հանդես եկավ Ի. Դրամբյանը: Աբստրակտ էքսպրեսիոնիզմի հիմնադիր Արշիլ Գորկուն (Վ. Ղազարյան) և 1960–1980-ական թթ. հայ դեկորատիվ քանդակին (Ա. Աղասյան) նվիրված հաղորդումները եզրափակեցին նիստը, որն աչքի ընկավ նաև վիճահարույց դրույթների առկայությամբ:

Ժամանակագրական և թեմատիկ լայն ընդգրկում ուներ նաև մասնաճյուղի երրորդ նիստը (նախագահ՝ ճարտարապետության դոկտոր Ա. Թորամանյան), որտեղ

հրապարակվեցին հնագույն պաշտամունքների արտացոլումներին (Զ. Թառայան), խաչքարերի պատկերագրությանը (Հ. Պետրոսյան), հայկական ձեռագրերի հատվածավորմանը (Ս. Մանուկյան), պոլսահայ ճարտարապետությանը (Ա. Գրիգորյան) առնչվող ուսումնասիրություններ: Գ. Քոթանջյանի զեկուցման մեջ լուսաբանվում էին նշանավոր նկարիչ Փ. Թերլեմեզյանի ստեղծագործության որոշակի ասպեկտներ:

Եզրափակիչ նիստի (նախագահ՝ Ա. Աղասյան) օրակարգում ընդգրկված էին հիմնականում նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստի հարցերին վերաբերող զեկուցումներ: Միակ բացառությունը երիտասարդ գիտնական Գ. Հովսեփյանի ելույթն էր, որում միջնադարյան հուշարձանների օրինակով արծարծվեց բնագրի և պատկերի փոխառնչության խնդիրը: Հաջորդ երկու զեկուցողները (Ա. Ավագյան, Մ. Ստեփանյան) ուշադրություն էին հրավիրում հայ նշանավոր գրաֆիկներ Տ. Խաչվանքյանի և Է. Շահինի կենսագրական ուղու և ստեղծագործական ժառանգության վրա՝ հրապարակ հանելով պատմագեղարվեստական նոր նյութ (Ա. Ավագյան) կամ էլ նորովի մեկնաբանելով եղածը (Մ. Ստեփանյան): Նիստի վերջին զեկուցումը, որով մասնաճյուղն ավարտեց աշխատանքը, Զ. Մոկացյանի՝ սփյուռքահայ արվեստագետ Մ. Գրիգորյանի հողակերտ հորինվածքների մասին հաղորդումն էր. գործեր, որոնք, արժանանալով օտարերկրյա արվեստագիտության սևեռուն ուշադրությանը, այդուհանդերձ, դեռ քիչ են հայտնի մեզանում:

Երաժշտության, թատրոնի, կինոյի մասնաճյուղի նստաշրջանի երեք նիստերում լսվեց 22 զեկուցում: Մասնաճյուղի առաջին նիստում (նախագահ՝ փիլիսոփայության դոկտոր Յա. Խաչիկյան) ընթերցված առաջին թեման էր «Շրջանը հայ և իրանական ժողովուրդների տղաբերքի ծեսերում», որը ներկայացրեց Ժ. Ավետիսյանը (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ): Երկրորդ զեկուցման թեման էր «Թատրոնը և հասարակությունը»: Բանախոս Հ. Հովհաննիսյանը, քննության առնելով ներկայիս հայ թատրոնի ճգնաժամի պատճառները, նկատեց, որ դրանք ոչ միայն թատրոնի ներսում են, այլև դրսում, և պայմանավորված են հասարակական ընդհանուր կառույցի թուլությամբ և քաղաքացիական իդեալների բացակայությամբ: Կոմպոզիտոր Ա. Տերտերյանի երաժշտության մեջ ֆոնիզմի կառուցվածքային կերպերի բացահայտմանն էր նվիրված Ս. Սարգսյանի (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) զեկուցումը: Հաջորդը Ս. Գուլյանովայի զեկուցումն էր՝ «Ռուբեն Մամուլյան. կինոկարիերայի սկիզբը» խորագրով: Հաջորդ բանախոսության մեջ Ա. Բաղդասարյանը բացահայտեց համշենահայերի աղեղնավոր ավանդական գործիքների՝ քեմոնայի և քեմենչեի համար գրված 12 նվագների կերտվածքի, հնչողության և կատարողական սկզբունքները: Իրանահայ թատրոնի՝ ի մասնավորի Թավրիզի հայ թատրոնի պատմության հարցերին էր առնչվում Ա. Չթյանի զեկուցումը: Ս. Հասմիկյանը (Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ) հայ կինոգիտության մեջ առաջին անգամ անդրադարձավ կինոյում խմբագրի նշանակությանը: Ականավոր հայ ռեժիսոր Արշակ Բուրջալյանի բեմադրություններում կոմպոզիցիոն և տարածական վճիռներին էր նվիրված առաջին նիստը եզրափակող Ս. Նալբանդյանի զեկուցումը:

Երկրորդ նիստում (նախագահ՝ արվեստագիտության թեկնածու Ա. Ասատրյան) առաջինն ընթերցվեց Ա. Գրիգորյանի «Վահագնի առասպելի շումերական առնչություններն ու դրանց երաժշտական ակունքները» վերնագրով զեկուցումը: Հաջորդը

Ժ. Զուրաբյանի (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) «Ինտերվալի ինտոնացիոն արտահայտչությունը որպես երաժշտական լեզվի բնորոշության գործոն» զեկուցումն էր: Երրորդ բանախոսության մեջ Մ. Ռուխկյանը ուրվագծեց Ա. Տերտերյանի սիմֆոնիզմի պատմական ակունքները և նրա նորարարական դիրքորոշման առանձնահատկությունները: Լուսավորականության հարցերին էր նվիրված Յա. Խաչիկյանի (ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտ) բանախոսությունը: Հ. Պիկիչյանը, քննության առնելով հայոց ավանդական հարսանեկան ծեսի համատեքստում երաժշտական նյութը, եզրակացրեց, որ հարսանեկան ծեսի հնչյունային տեքստն ամփոփում ու ամբողջացնում է հայոց ավանդական երաժշտամտածողությունը: Երկրորդ նիստը եզրափակվեց Ն. Սարգսյանի «Արվեստը հոգեթերապիայի համակարգում» խորագրով զեկուցումով:

Նստաշրջանի եզրափակիչ երրորդ նիստը (նախագահ՝ արվեստագիտության դոկտոր Հ. Հովհաննիսյան) սկսվեց Կ. Զաղացպանյանի (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) զեկուցումով՝ նվիրված կոմպոզիտոր Գ. Հովունցի ստեղծագործության մեջ ավանդականի և նորարարականի դրսևորումներին, նրա ստեղծած հարմոնիկ համակարգի առանձնահատկություններին: Հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստի ժանրերի տարբերազատման ցարդ գիտական լուծում չստացած խնդրին էր նվիրված Մ. Նավոյանի բանախոսությունը: Երրորդ զեկուցման մեջ Ա. Փահլևանյանը (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա), բացահայտելով Ա. Խաչատրյանի՝ ՀԽՍՀ պետական հիմնի ելևէջային ակունքները, մեկ անգամ ևս կարևորեց այն ՀՀ պետական օրհներգ հռչակելու անհրաժեշտությունը: Է. Պետրոսյանի (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ) զեկուցումը խորագրված էր՝ «Ա. Կ. Ջիվելեգովի (1875–1952) գիտական ժառանգությունը»: «Հայ երկրագործի աշխատանքային երգեր» համահավաք ժողովածուում հորովելների ինքնության խնդիրներն էր շոշափում Զ. Թագակչյանի բանախոսությունը: Մ. Գորկու «Հատակում» (1932), Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» (1934) և Մ. Զանանի «Շահնամե» (1935) ներկայացումների հանրահայտ ռեժիսոր Վ. Ամեմյանի բեմադրությունների ռեժիսորական հայեցակարգերի ուսումնասիրության արդյունքներն ամփոփեց Ի. Բաբայանը: «Տիգրան Չուխաճյանի «Զեյթունցիների քայլերգը»՝ հայոց ազգայինազատագրական պայքարի օրհներգ» վերտառությամբ բանախոսությունը ներկայացրեց Ա. Ասատրյանը: Երրորդ նիստն իր աշխատանքը եզրափակեց Մ. Սարգսյանի «Բանա-սացը որպես ավանդական երգարվեստի կրող և փոխանցող» զեկուցումով:

Մասնաճյուղի երաժշտության ենթամասնաճյուղում ընթերցված զեկուցումները ներկայացրեցին ինչպես պատմական (դասական, ժամանակակից) ու տեսական երաժշտագիտության, այնպես էլ երաժշտական միջնադարագիտության և ֆոլկլորագիտության հրատապ խնդիրները: Թեմատիկ ու ժամանակագրական լայն ընդգրկում ունեին նաև թատրոնի և կինոյի ենթամասնաճյուղում ընդգրկված զեկուցումները: Նստաշրջանի աշխատանքներն ուղեկցվեցին աշխույժ քննարկումներով ու գիտական բուռն բանավեճերով:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ., ԱՎԱԳՅԱՆ Ա. Վ.